ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19,

03/03/2023թ.

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

ՆԱԽԱԳԱՀ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Պարոն Սիմոնյան,

Հիմք ընդունելով Սահմանադրության 103-րդ հոդվածը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 99-րդ և 109-րդ հոդվածները՝ Ձեզ ենք ներկայացնում «Սահմանադրական դատարանի դատավոր Սեդա Սաֆարյանի լիազորությունները դադարեցնելու հարցով Սահմանադրական դատարան դիմելու մասին» Ազգային Ժողովի որոշման նախագիծը:

Կից ներկայացվում են՝

1. «Սահմանադրական դատարանի դատավոր Սեդա Սաֆարյանի լիազորությունները դադարեցնելու հարցով Սահմանադրական դատարան դիմելու մասին» Ազգային ժողովի որոշման նախագիծը (հիմնական զեկուցող՝ Արծվիկ Մինասյան),
2. Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության որոշումը Սահմանադրական դատարանի դատավոր Սեդա Սաֆարյանի լիազորությունները դադարեցնելու հարցով Սահմանադրական դատարան դիմելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ ներկայացնելու մասին,
3. նախագծի ընդունման հիմնավորումը, ինչպես նաև վերջինիս մշակման համար հիմք հանդիսացած փաստաբաններ Արսեն Բաբայանի և Սոս Հակոբյանի համատեղ դիմումը (միջնորդությունը)՝ ուղղված Ազգային ժողովի խմբկացություններին:
4. Սահմանադրական դատարանին հասցեագրված դիմումը:

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԵՅՐԱՆ ՕՀԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19, +374 11 51 32 05,

23/02/2023թ.

ՈՐՈՇՈՒՄ N

Առաջնորդվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ, 9-րդ, 99-րդ և 109-րդ հոդվածներով՝ Ազգային Ժողովի «Հայաստան» խմբակցությունը

Որոշեց՝

1) Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնել Սահմանադրական դատարանի դատավոր Սեդա Սաֆարյանի լիազորությունները դադարեցնելու հարցով Սահմանադրական դատարան դիմելու մասին» Ազգային ժողովի որոշման նախագիծը:

2) Նախագծի հիմնական զեկուցող նշանակել Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության քարտուղար Արծվիկ Մինասյանին:

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԵՅՐԱՆ ՕՀԱՆՅԱՆ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ՍԵԴԱ ՍԱՖԱՐՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՀԱՐՑՈՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Ղեկավարվելով Սահմանադրության 103-րդ հոդվածով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 97-րդ հոդվածի 1-ին մասով, 109-րդ հոդվածով՝ դիմել Սահմանադրական դատարան՝ Սահմանադրական դատարանի դատավոր Սեդա Սաֆարյանի լիազորությունները դադարեցնելու հարցով:

2. Սահմանադրական դատարանի դատավոր Սեդա Սաֆարյանի լիազորությունները դադարեցնելու հարցով Ազգային ժողովի դիմումը սույն որոշման անբաժանելի մասն է:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Սույն նախագծի ներկայացման համար հիմք է հանդիսացել փաստաբաններ Արսեն Բաբայանի և Սոս Հակոբյանի համատեղ դիմումը (միջնորդությունը կցվում է)՝ ուղղված Ազգային ժողովի խմբկացություններին:

Դիմումում ներկայացված փաստերի վերլուծությունը ողջամիտ ենթադրություն է ձևավորում, որ Սահմանադրական դատարանի դատավոր Սեդա Սաֆարյանը խախտել է Սահմանադրական դատարանի դատավորի համար սահմանված անհամատեղելիության պահանջները, որի պայմաններում Ազգային ժողովը լիազորված է դիմելու Սահմանադրական դատարանին՝ անհամատեղելիության պահանջը խախտած դատավորի լիազորությունների դադարեցման վերաբերյալ դիմումով:

Ժողովրդավարական և իրավական պետություններում անթույլատրելի է պաշտոնատար անձանց կողմից պաշտոնի հետ անհամատեղելի գործունեության իրականացումը, առավել ևս այն դեպքում, երբ խոսքը վերաբերում է բարձրագույն մասնագիտական-սահմանադրական վերահսկողություն և արդարադատություն իրականացնող մարմնի՝ Սահմանադրական դատարանի դատավորին:

Սահմանադրական դատարանի դատավորի կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու վերաբերյալ փաստերն ու դրան առնչվող իրավական կարգավորումները մանրամասն ներկայացված են կից դիմումում, որը սույն նախագծի անբաժանելի մասն է:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ

ՀՀ, ք.Երևան, Մ. Բաղրամյան 10

ԴԻՄՈՂ՝ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ՀՀ.ք.Երևան, Մ. Բաղրամյան 19

ԴԻՄՈՒՄ

(անհամատեղելիության պահանջների խախտման հիմքով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի դատավոր Սեդա Սաֆարյանի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ)

ԲԱՐՁՐ ԴԱՏԱՐԱՆ,

Առաջնորդվելով Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի կարգավորումներով և ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետով, 97-րդ հոդվածի 1-ին մասով, 109-րդ հոդվածով և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 83-րդ հոդվածով՝ Ձեզ է ներկայացվում անհամատեղելիության պահանջների խախտման հիմքով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի դատավոր Սեդա Սաֆարյանի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ Ազգային ժողովի դիմումը:

ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՔՈՒՄ ԸՆԿԱԾ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ.

1) Սեդա Սաֆարյանը, որպես «ՍԵԴԱ ՍԱՖԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ» անվանումով անհատ ձեռնարկատեր գրանցվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում 11.08.1994թ. 282.00216 հաշվառման համարի ներքո:

2) Սեդա Սաֆարյանը 2022թ. սեպտեմբերի 15-ին Ազգային ժողովի որոշմամբ ընտրվել է Սահմանադրական դատարանի դատավոր:

3) Սեդա Սաֆարյանը Սահմանադրական դատարանի դատավորի պաշտոնը ստանձնելու երդումը Ազգային ժողովում տվել է դեկտեմբերի 16-ին, թեև «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 5-րդ հոդվածի կարգավորումների համաձայն պաշտոնի ստանձնման օրը դեկտեմբերի 10-ն է:

4) Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում առկա տեղեկատվության համաձայն՝ 27.01.2023թ. «ՍԵԴԱ ՍԱՖԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ» անհատ ձեռնարկատերը հանվել է հաշվառումից: Ընդ որում, Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում «ՍԵԴԱ ՍԱՖԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ» անհատ ձեռնարկատիրոջ գործունեության կասեցման կամ (ժամանակավոր) դադարեցման վերաբերյալ որևէ այլ գրառում առկա չէ:

Այսինքն, Պետական ռեգիստրի գրանցամատյանում առկա տեղեկատվության համաձայն Սեդա Սաֆարյանը առանց ընդհատումների որպես անհատ ձեռնարկատեր գործել է 1994թ. օգոստոսի 11-ից մինչև 2023թ. հունվարի 27-ը:

ԴԻՄՈՒՄԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ.

1. **Սահմանադրության 164-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝** «Դատավորը չի կարող զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: **Սահմանադրական դատարանի մասին օրենքով** և Դատական օրենսգրքով կարող են սահմանվել **անհամատեղելիության լրացուցիչ պահանջներ:»**

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ «Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները՝ Սահմանադրական դատարանի որոշմամբ, իսկ դատավորի լիազորությունները՝ Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ, **դադարեցվում են անհամատեղելիության պահանջները խախտելու,** քաղաքական գործունեությամբ զբաղվելու, առողջական վիճակի պատճառով պաշտոնավարման անհնարինության, էական կարգապահական խախտում կատարելու դեպքերում:»

2. **«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝** «Սահմանադրական դատարանի դատավորը չի կարող զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:»

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Սահմանադրական դատարանի դատավորի նկատմամբ կիրառելի են հանրային ծառայողի համար ձեռնարկատիրական գործունեության վերաբերյալ օրենքով սահմանված կարգավորումները:»

3. **«Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի՝**

ա) 1-ին մասի համաձայն՝ «Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք (բացառությամբ համայնքի ավագանու անդամների) և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, **զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ**, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:

բ) 5-րդ մասի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները **պաշտոնում նշանակվելուց (ընտրվելուց) հետո՝ մեկ ամսվա ընթացքում, պարտավոր են ապահովել սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների կատարումը**:

գ) 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ սույն օրենքի իմաստով՝ ձեռնարկատիրական գործունեություն է համարվում՝... **անհատ ձեռնարկատեր լինելը:**

դ) 17-րդ մասի համաձայն՝ «**Հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի կողմից սույն հոդվածով նախատեսված անհամատեղելիության պահանջները խախտելը նրա լիազորությունների դադարեցման կամ նրան զբաղեցրած պաշտոնից ազատելու հիմք է:»**

4. «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Անհատ ձեռնարկատերն այն ֆիզիկական անձն է, որն իրավունք ունի, առանց իրավաբանական անձ կազմավորելու, ինքնուրույն, իր անունից և իր ռիսկով իրականացնել գործունեություն, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ (եկամուտ) ստանալն է»:

Նույն օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ «**Ֆիզիկական անձի, որպես անհատ ձեռնարկատիրոջ, իրավունակությունն ու գործունակությունը ծագում են նրա պետական հաշվառման պահից և դադարում են այդ ֆիզիկական անձի իրավունակության կամ գործունակության դադարման, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում պետական հաշվառումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու պահից**»:

5. Վճռաբեկ դատարանը 29.02.2008թ. թիվ 3-34(ՏԴ) քաղաքացիական գործի շրջանակներում, անդրադառնալով անհատ ձեռնարկատիրոջ քաղաքացիաիրավական պատասխանատվությանը, նշել է, որ **անհատ ձեռնարկատեր գրանցվելու պահից փոփոխվում է ֆիզիկական անձի իրավունակության բովանդակությունը**: Այսինքն՝ այդ պահից ֆիզիկական անձը հնարավորություն է ստանում ունենալու այնպիսի իրավունքներ և կրելու այնպիսի պարտականություններ, որոնք ոչ անհատ ձեռնարկատեր քաղաքացին չի կարող ունենալ կամ կրել: Սույն իրավական նորմերից հետևում է, որ ֆիզիկական անձը հաշվառվում է որպես անհատ ձեռնարկատեր բացառապես ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով: Անհատ ձեռնարկատեր լինելու յուրահատկություններից (ֆիզիկական անձ հանդիսանալը, սեփական ռիսկով գործելը, հնարավորությունը գործելու առանց վարձու աշխատակիցներ ունենալու, հաշվառման և հաշվառումից հանելու ընթացակարգերի պարզեցվածությունը) հետևում է ֆիզիկական անձի կողմից անձամբ (սեփական ջանքերով) **ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու հնարավորությունը և կանխավարկածը,** որը սկսում է գործել պետական մարմնում հաշվառվելու պահից սկսած:

Անդրադառնալով անհատ ձեռնարկատիրոջ իրավաբանական կարգավիճակի կարգավորման նորմերին՝ Վճռաբեկ դատարանը 28.12.2015թ. թիվ ՎԴ/9770/05/13 որոշմամբ նշել է, որ «Վերոնշյալ հոդվածների համակարգային վերլուծությունից հետևում է, որ քաղաքացու (ֆիզիկական անձի) կողմից ձեռնարկատիրական գործունեություն է համարվում ինքնուրույն այն գործունեությունը, որն իրականացվում է սեփական ռիսկով և ուղղված է պարբերական շահույթ հետապնդելուն: Քաղաքացու կողմից ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու անհրաժեշտ պայման են հանդիսանում վերջինիս իրավունակությունն ու գործունակությունը և **պետական հաշվառումը որպես ձեռնարկատեր**: Այսինքն՝ ֆիզիկական անձի անհատ ձեռնարկատիրոջ կարգավիճակի առկայությունը որոշվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրում հաշվառման փաստով...:»

6. Անհատ ձեռնարկատիրոջը հաշվառելու, հաշվառումից հանելու վերաբերյալ կարգավորումները սահմանվում են «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եվ անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքով, որի 30-րդ հոդվածի համաձայն՝ անհատ ձեռնարկատիրոջը պետական հաշվառումից հանելու համար որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված անձը կամ նրա լիազորած ներկայացուցիչը գործակալություն է ներկայացնում համապատասխան դիմում: Նույն օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Դիմումը ներկայացնելու պահից որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված անձը համարվում է պետական հաշվառումից հանված:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

Վերոգրյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի համադրության արդյունքում ողջամտորեն ձևավորվում են հետևյալ պնդումները.

1) Անհատ ձեռնարկատիրոջ կարգավիճակը և այդ կարգավիճակի դադարումը հաստատվում է պետական մարմնում հաշվառված լինելու և հաշվառումից հանված լինելու փաստով:

2) Անհատ ձեռնարկատիրոջ կարգավիճակի դադարեցման պահը վերջինիս պետական հաշվառումից հանելու պահն է, որը նույնական է համապատասխան դիմումի ներկայացման պահին:

3) Որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված լինելու պահից մինչև անհատ ձեռնարկատիրոջ կարգավիճակի դադարեցման պահը համարվում է, որ անձը զբաղվում է ձեռնարկատիրական գործունեությամբ: Ավելին՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու փաստն ապացուցելու համար ինքնին բավարար և հաստատված հանգամանք է համարվում Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում հաշվառված լինելը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, երբ հարկ վճարողը (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերը) անորոշ կամ որոշակի ժամկետով գործունեությունը դադարեցնելու մասին հայտարարություն է ներկայացնում Պետական եկամուտների կոմիտե, ինչը սակայն սույն դեպքում վերաբերելի և հետևաբար կիրառելի չէ, քանի որ Սեդա Սաֆարյանի կողմից նման հայտարարություն ներկայացնելու վերաբերյալ որևէ գրառում կամ հաստատում առկա չէ:

4) Անհատ ձեռնարկատիրոջ կարգավիճակն անհամատեղելի է Սահմանադրական դատարանի դատավորի կարգավիճակի հետ:

<u>Վերոգրյալի հիման վրա կարելի է գալ երեք եզրահանգման, որոնցից յուրաքանչյուրի պարագայում, միևնույն է, հանգում ենք այն տրամաբանական մտքին, որ Սահմանադրական դատարանի դատավոր Սեդա Սաֆարյանը, ամբողջությամբ գիտակցելով հետևանքները, իր վարքագծով, գործողություններով (անգործությամբ) խախտել է Սահմանադրական դատարանի դատավորի համար սահմանված անհամատեղելիության պահանջը:</u>

<u>Եզրահանգում_1.</u> Սեդա Սաֆարյանը 2022թ. սեպտեմբերի 15-ին Ազգային ժողովի որոշմամբ ընտրվել է Սահմանադրական դատարանի դատավոր, հետևաբար, հիմք ընդունելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասը, անհամատեղելիության պահանջների ապահովման նպատակով նախատեսված մեկամսյա ժամկետը ավարտվել է 2022թ հոկտեմբերի 16-ին, որի դրությամբ սակայն, «ՍԵԴԱ ՍԱՖԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ» ԱՁ-ն շարունակել է գործել, չի կասեցվել, չի դադարեցվել վերջինիս գործունեությունը, իսկ Սեդա Սաֆարյանն էլ շարունակել է հանդես գալ որպես փաստաբան, ինչով իսկ խախտել է Սահմանադրությամբ և սահմանադրական

օրենքով Սահմանադրական դատարանի դատավորի համար սահմանված անհամատեղելիության պահանջները:

Եզրահանգում 2. Եթե հիմք ընդունենք «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Սեդա Սաֆարյանը 2022թ դեկտեմբերի 10-ին է ստանձնել Սահմանադրական դատարանի դատավորի պաշտոնը, հետևաբար մինչև 2023թ. հունվարի 11-ը «ՍԵԴԱ ՍԱՖԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ» ԱՁ գործունեությունը պետք է դադարեցված լիներ, սակայն խախտելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասը, Սեդա Սաֆարյանը շարունակել է զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ առ 27.01.2023թ:

Եզրահանգում 3. Եթե հիմք ընդունելով Սահմանադրական դատարանի դատավորի երդում տալու օրը՝ Սեդա Սաֆարյանը 2022թ դեկտեմբերի 16-ին ստանձնել է Սահմանադրական դատարանի դատավորի պաշտոնը, սակայն դրանից հետո մեկամսյա ժամկետում չի դադարեցրել «ՍԵԴԱ ՍԱՖԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ» ԱՁ գործունեությունը և այդ ընթացքում ըստ օրենսդրական կարգավորումների, զբաղվել է ձեռնարկատիրական գործունեությամբ:

Քննարկված երեք եզրահանգումների պարագայում էլ ապացուցվում և հաստատվում է, որ Սահմանադրական դատարանի դատավոր Սեդա Սաֆարյանը պաշտոնը ստանձնելուց հետո **օրենքով սահմանված մեկ ամսյա թույլատրելի ժամկետի ավարտից հետո շարունակել է զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ:**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով սույն դիմումում ներկայացված փաստերն ու փաստական հանգամանքները, իրավական նորմերն ու դրանց վերլուծությունները, ակնհայտ է դառնում, որ Սահմանադրական դատարանի դատավոր Սեդա Սաֆարյանը թույլատրելի ժամկետից առվնազն 10 օր ավելի զբաղվել է Սահմանադրական դատարանի դատավորի պաշտոնի հետ անհամատեղելի գործունեությամբ, այն է ձեռնարկատիրական գործունեությամբ:

Սեդա Սաֆարյանը չէր կարող չիմանալ սրա մասին, քանի որ հենց սահմանադրությանբ Սահմանադրական դատարանի դատավորի համար սահմանված է բարձր մասնագիտական որակներով օժտված լինելու իմպերատիվ պայմանը: Ավելին՝ ընտրվելով 2022թ սեպտեմբերի 15-ին, վերջինս արդեն պետք է գիտակցեր և քայլեր ձեռնարկեր «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջը կատարելու ուղղությամբ: Մինչդեռ Սեդա Սաֆարյանը 2022թ նոյեմբերի 30-ին, գիտակցելով, որ իր պաշտոնական գործունեության հետ անհամատեղելի է փաստաբանական գործունեությունը և հաշվի առնելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, դիմել է Փաստաբանների պալատ՝ իր արտոնագրի կասեցման խնդրանքով, սակայն չի ձեռնարկել համանման գործողություններ «ՍԵԴԱ ՍԱՖԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ» ԱՁ-ի գործունեության դադարեցման (հաշվառումից հանելու) վերաբերյալ:

Անդրադառնալով Սեդա Սաֆարյանի կողմից իր գործողությունների և կամ անգործության հետևանքներին, պետք է վկայակոչել «Դելֆի ՍՊԸ-ն ընդդեմ Էստոնիայի» գործով 16.06.2015թ. ՄԻԵԴ վճիռը, որի համաձայն «մասնագիտական գործունեություն ծավալող անձինք իրենց մասնագիտական գործունեության ընթացքում սովոր են զգուշավորության բարձր մակարդակ դրսևորել, ինչը հաշվի առնելով՝ կարելի է ակնկալել, որ նշված անձինք

հատուկ ուշադրություն կդարձնեն այդպիսի գործունեության արդյունքում առաջացող հնարավոր ռիսկերը գնահատելուն:»

Այսպիսով՝ Սեդա Սաֆարյանը, զբաղեցնելով Սահմանադրական դատարանի դատավորի պաշտոն, միաժամանակ զբաղվել է ձեռնարկատիրական գործունեությամբ՝ դրանով իսկ խախտելով Սահմանադրական դատարանի դատավորի համար սահմանված անհամատեղելիության պահանջները:

Առ այդ, Ազգային ժողովը հայցում է Սահմանադրական դատարանից՝ Սահմանադրական դատարանի դատավոր Սեդա Սաֆարյանի լիազորությունների դադարեցման հարցի վերաբերյալ սույն դիմումը ընդունել վարույթ, գործի քննության արդյունքների հիման վրա կայացնել որոշում Սահմանադրական դատարանի դատավոր Սեդա Սաֆարյանի լիազորությունների դադարեցման վերաբերյալ:

Սույն դիմումին կից ներկայացվում են՝

1. Սեդա Սաֆարյանի դիմումի՝ «ՍԵԴԱ ՍԱՖԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ» ԱՁ պետական հաշվառումից հանելու վերաբերյալ:
2. Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրից «ՍԵԴԱ ՍԱՖԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ» ԱՁ-ի վերաբերյալ քաղվածքի պատճենը:

Էլեկտրոնային Ռեգիստր / ՀՀ Կառավարություն

Պետական ռեգիստրի գործակալություն՝

Անհատ Ձեռնարկատեր՝ **ՍԵԴԱ ՍԱՖԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ**

Հաշվառման(գրանցման) ամսաթիվ՝ **1994-08-11**

Հասցե, կապի միջոցը **ԳԱՅԻ Պ. / Շ / 8 / 140 ՆՈՐ ՆՈՐՔ 0062 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ**, հեռ.--

ԴԻՄՈՒՄ N 891420

Խնդրում եմ Ձեզ պետական գրանցամատյանում կատարել համապատասխան գրառում անհատ ձեռնարկատիրոջը պետական հաշվառումից հանելու մասին եւ տրամադրել տեղեկանք գործունեության դադարեցման վերաբերյալ:

Կից ներկայացնում եմ՝

Դիմող՝ **ՍԵԴԱ ՍԱՖԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ**

Սրբայր կնքեցի
27.01.2023թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

Էլեկտրոնային քաղվածք: Բեռնվել է՝ 2023-02-06-ին, www.e-register.am կայքից:

ՍԵԴԱ ՍԱՖԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ

Անհատ ձեռնարկատեր

Հաշվառման համարը	282.00216
Կարգավիճակ	Հաշվառումից հանված է
Հաշվառման ամսաթիվը	1994-08-11
Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)	25204636
Ապահովադրի ծածկագիր	47518273
Կազմակերպաիրավական տեսակ	Անհատ ձեռնարկատեր
Էլ. փոստ	-
Կայք	-

Պետական հաշվառման վայրը

Հասցե	ԳԱՅԻ Պ. / 8 / 140
Փոստային դասիչ	0062 ԵՐԵՎԱՆ
Քաղաք(գյուղ)	ՆՈՐ ՆՈՐՔ ԵՐԵՎԱՆ
Անձնագրային տվյալներ	AV0533469 2022-11-22 005
Հեռախոս	--

Բնակության վայրը

Հասցե	ԳԱՅԻ Պ. / 8 / 140
Փոստային դասիչ	0062 ԵՐԵՎԱՆ
Քաղաք(գյուղ)	ՆՈՐ ՆՈՐՔ ԵՐԵՎԱՆ
Հեռախոս	--

Պետական միասնական գրանցամատյանում կատարված փոփոխություններ	
Գրանցման ամսաթիվ	Փոփոխություններ
1995-07-12	**ԱՁ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հասցեի փոփոխություն**
2023-01-27	**Հաշվառումից հանում**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՁԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿՆԻՔ

LEGIST
Advocates Team

21.02.2023թ.
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

✓ՀՀ ԱԺ «ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ ՍԵՅՐԱՆ ՕՀԱՆՅԱՆԻՆ

ՀՀ ԱԺ «ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ ՀԱՅԿ ՄԱՄԻՋԱՆՅԱՆԻՆ

ՀՀ ԱԺ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ ՀԱՅԿ ԿՈՆՋՈՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոնայք,

Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Սահմանադրական դատարանի դատավոր Սեդա Սաֆարյանի կողմից ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով Սահմանադրական դատարանի դատավորի համար սահմանված անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ մեր կողմից կազմված միջնորդությունը (այսուհետ՝ միջնորդություն), որը ներառում է նշված վարքագծի իրավաբանական որակման հակիրճ վերլուծությունը:

Առաջարկում ենք ՀՀ Ազգային ժողովի խմբակցությունների կողմից ՀՀ Ազգային ժողովում համապատասխան որոշման նախագիծ շրջանառության մեջ դնելու պարագայում կազմակերպել Ազգային ժողովի՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի համաձայն Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները դադարեցնելու հարցով Սահմանադրական դատարան դիմելու գործընթացը:

Հայտնում ենք մեր պատրաստակամությունը պատասխանել նշված ուսումնասիրման արդյունքում պատգամավորների մոտ առաջացած հարցերին

Առդիր՝ Միջնորդությունը – 15 թերթ

Հարգանքով՝

Փաստաբաններ

ՍՈՍ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՐՍԵՆ ԲԱԲԱՅԱՆ

«ԼԵԳԻՍՏ» ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Ջորափի 70/3 | +374 93 430618 | mail@legist.team
www.legist.am

ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ՍԵԴԱ ՍԱՖԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ
ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՀԻՄՔՈՎ
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՀԱՐՑՈՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԴԻՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վերլուծություն

Սեդա Սաֆարյանի կողմից անհամատեղելիության պահանջների խախտման վերաբերյալ

Պնդում.

Մեր կարծիքով Սեդա Սերյոժայի Սաֆարյանը որպես Սահմանադրական դատարանի դատավոր խախտել է Սահմանադրական դատարանի դատավորի համար Սահմանադրությամբ սահմանված անհամատեղելիության պահանջները, այնքանով, որքանով դրանք վերաբերվում են ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքին:

Տվյալ պնդումը հաստատելու կամ հերքելու համար անհրաժեշտ է պատասխանել հետևյալ հարցերին:

1. Ի՞նչ բովանդակություն ունի կամ ի՞նչ է նշանակում Սահմանադրությամբ և օրենքներով կարգավորված ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը (այդ թվում՝ դրա արգելքը) Սահմանադրական դատարանի դատավորի պարագայում;

2. Արդյո՞ք Սեդա Սաֆարյանը դրսևորել է ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու վարքագիծ Սահմանադրական դատարանում որպես դատավոր պաշտոնավարելու ժամանակահատվածում:

1. Կանոնի սահմանում.

Սահմանադրության 164-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն (ընդգծումը մերն է)՝

«6. Դատավորը չի կարող զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, ***զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ****, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Սահմանադրական դատարանի մասին օրենքով և Դատական օրենսգրքով կարող են սահմանվել անհամատեղելիության լրացուցիչ պահանջներ»:*

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի համաձայն (ընդգծումը մերն է)՝

«(...) 3. Սահմանադրական դատարանի դատավորը չի կարող զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական

ինքնակառավարման մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, ***զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ****, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:*

4. Սահմանադրական դատարանի դատավորի նկատմամբ կիրառելի են ***հանրային ծառայողի համար ձեռնարկատիրական գործունեության վերաբերյալ*** *օրենքով սահմանված կարգավորումները: (...)»:*

Դատական օրենսգրքի 5-րդ հոդվածի համաձայն (ընդգծումը մերն է)՝

«1. Դատավորը չի կարող զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, ***զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ****, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:*

2. Դատավորի նկատմամբ կիրառելի են ***հանրային ծառայողի համար ձեռնարկատիրական գործունեության վերաբերյալ*** *օրենքով սահմանված կարգավորումները»:*

Վերոնշյալ դրույթներից ակնհայտ է, որ

- սահմանադիրը և օրենսդիրը, այլ գործոնների հետ շարքում, արգելում են Սահմանադրական դատարանի դատավորին զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ.
- ինչպես Սահմանադրությամբ, այնպես էլ օրենքներով Սահմանադրական դատարանի դատավորի կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքը սահմանված է որպես անհամատեղելիության պահանջ.
- Սահմանադրական դատարանի դատավորի կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավահարաբերությունների նկատմամբ կիրառվում են նույն այն օրենսդրական կանոնները, որոնք սահմանված են կարգավորելու հանրային ծառայողի կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավահարաբերությունները: Այսինքն, Սահմանադրական դատարանի դատավորի վարքագիծը ձեռնարկատիրական գործունեություն որակելու կամ չորակելու համար, հարկավոր է դատավորի վարքագիծը համեմատել (մոտարկել) հանրային ծառայողի համար օրենքներով սահմանված ձեռնարկատիրական գործունեության վերաբերյալ կանոնների հետ:

«Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝

«7. Սույն օրենքի իմաստով՝ ձեռնարկատիրական գործունեություն է համարվում՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածով նախատեսված գործունեությունն իրականացնելը,

2) անհատ ձեռնարկատեր լինելը,

3) առևտրային կազմակերպության մասնակից, բաժնետեր, փայատեր լինելը, բացառությամբ այն դեպքի, երբ առևտրային կազմակերպության բաժնեմասը, բաժնետոմսը, փայն ամբողջությամբ հանձնվել են հավատարմագրային կառավարման, կամ չի գերազանցում սույն հոդվածի 8-րդ մասի 11-րդ կետում նշված թույլատրելի բաժնեմասնակցությունը»:

Նշվածից ակնհայտ է, որ օրենսդիրը ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը հնարավոր է համարել երեք եղանակով, որոնցից յուրաքանչյուրը ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու ինքնուրույն եղանակներ են (դրանցից մեկի առկայությունը պայմանավորված չէ մյուս հիմքերի առկայությունով): ***Սահմանադրական դատարանի դատավորի վարքագիծը ձեռնարկատիրական գործունեություն որակելու երեք ինքնուրույն հիմքերից մեկը օրենսդրի սահմանմամբ հանդիսանում է անհատ ձեռնարկատեր լինելու փաստը:***

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն.՝

«2. Քաղաքացին, որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվելու պահից, իրավունք ունի, առանց իրավաբանական անձ կազմավորելու, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ»:

«Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Անհատ ձեռնարկատերն այն ֆիզիկական անձն է, որն իրավունք ունի, առանց իրավաբանական անձ կազմավորելու, ինքնուրույն, իր անունից և իր ռիսկով իրականացնել գործունեություն, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ (եկամուտ) ստանալն է»:

«Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝

«Ֆիզիկական անձի, որպես անհատ ձեռնարկատիրոջ, իրավունակությունն ու գործունակությունը ծագում են նրա պետական հաշվառման պահից և դադարում են այդ ֆիզիկական անձի իրավունակության կամ գործունակության դադարման, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում պետական հաշվառումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու պահից»:

ՀՀ վճռաբեկ դատարանը *29.02.2008թ. թիվ 3-34(ՏԴ)* քաղաքացիական գործի շրջանակներում, անդրադառնալով անհատ ձեռնարկատիրոջ քաղաքացիաիրավական պատասխանատվությանը, նշել է.

«(...) Անհատ ձեռնարկատեր գրանցվելու պահից փոփոխվում է ֆիզիկական անձի իրավունակության բովանդակությունը: Այսինքն՝ այդ պահից ֆիզիկական անձը հնարավորություն է ստանում ունենալու այնպիսի իրավունքներ և կրելու այնպիսի

պարտականություններ, որոնք ոչ անհատ ձեռնարկատեր քաղաքացին չի կարող ունենալ կամ կրել (...)»:

Սույն իրավական նորմերից հետևում է, որ ֆիզիկական անձը հաշվառվում է որպես անհատ ձեռնարկատեր բացառապես ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով: Անհատ ձեռնարկատեր լինելու յուրահատկություններից (ֆիզիկական անձ հանդիսանալը, սեփական ռիսկով գործելը, հնարավորությունը գործելու առանց վարձու աշխատակիցներ ունենալու, հաշվառման և հաշվառումից հանելու ընթացակարգերի պարզեցվածությունը) հետևում է ֆիզիկական անձի կողմից անձամբ (սեփական ջանքերով) ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու հնարավորությունը և կանխավարկածը, որը սկսում է գործել պետական մարմնում հաշվառվելու պահից սկսած:

Անհատ ձեռնարկատիրոջ իրավաբանական կարգավիճակը կարգավորող վերը նշված հիմնական (բազային) նորմերը վերլուծելու արդյունքում ՀՀ Վճռաբեկ դատարանը իր *28.12.2015թ. թիվ ՎԴ/9770/05/13* որոշմամբ նշել է (ընդգծումը մերն է).

«Վերոնշյալ հոդվածների համակարգային վերլուծությունից հետևում է, որ քաղաքացու (ֆիզիկական անձի) կողմից ձեռնարկատիրական գործունեություն է համարվում ինքնուրույն այն գործունեությունը, որն իրականացվում է սեփական ռիսկով և ուղղված է պարբերական շահույթ հետապնդելուն: Քաղաքացու կողմից ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու անհրաժեշտ պայման են հանդիսանում վերջինիս իրավունակությունն ու գործունակությունը և ***պետական հաշվառումը որպես ձեռնարկատեր:***

Այսինքն՝ ֆիզիկական անձի անհատ ձեռնարկատիրոջ կարգավիճակի առկայությունը որոշվում է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրում հաշվառման փաստով՝ *անկախ այն փաստից, թե ինչ կարգավիճակով է տվյալ ֆիզիկական անձը գրանցված առևտրային իրավաբանական անձի մասնակիցների (հիմնադիր, բաժնետեր, մասնակից) կազմում»:*

Ուստի, ՀՀ օրենսդրության և ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների համաձայն անձի անհատ ձեռնարկատեր լինելը (Հանրային ծառայության օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի ձևակերպում) հավաստվում է Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում հաշվառված լինելու փաստով:

Ընդ որում, օրենսդրության և դատական պրակտիկայի համաձայն, միայն անձի կողմից ***ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու իրավունքից հրաժարվելու*** մասին վկայող օրենքով սահմանված ակտիվ գործողությունների իրականացման պարագայում կարելի է անհատ ձեռնարկատեր հաշվառված լինելը չդրակել ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու վարքագիծ:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը, մեկնաբանելով (ներկայում ուժը կորցրած) «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» օրենքի կիրառությունը իր 27.11.2015թ. թիվ ՎԴ/9439/05/13 որոշմամբ նշել է (ընդծումը մերն է).

*«Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորություն հաշվարկելու համար Ձեռնարկատիրոջ կողմից գործունեություն իրականացնելու հանգամանքը կարող է նշանակություն ունենալ միայն 25.07.2012 թվականին նախորդող ժամանակաշրջանին վերաբերող մասով, **այն էլ այն դեպքում, երբ վերջինս պետական գրանցման վկայականը ժամանակավոր հանձնել է լիազորված մարմնին**, իսկ 25.07.2012 թվականին հաջորդող ժամանակաշրջանի համար պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորություն հաշվարկելու համար ապահովադրի կողմից գործունեություն իրականացնելու հանգամանքի պարզման անհրաժեշտությունն ընդհանրապես բացակայում է, քանի որ **պետական ռեգիստրի մարմիններում Ձեռնարկատիրոջը հաշվառումից հանելու վերաբերյալ գրառման բացակայության պայմաններում գործում է ապահովադրի կողմից գործունեություն իրականացնելու կանխավարկածը**, որի պարագայում վերջինս պարտավոր է պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով կատարել իր պարտականությունները»:*

Ներկայում հարկային օրենսդրությունը կարգավորող ՀՀ հարկային օրենսգրքում նույնպես, առկա է մեխանիզմ, որի համաձայն հարկ վճարողը ունի հնարավորություն տեղեկացնելու իր գործունեությունը (ձեռնարկատիրական գործունեության) ժամանակավոր կամ անորոշ ժամկետով դադարեցնելու մասին:

Հարկային օրենսգրքի 53-րդ հոդվածի 8-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն հարկ վճարողը (Հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն անհատ ձեռնարկատերը նույնպես հարկ վճարող է հանդիսանում) կարող է հարկային մարմին ներկայացնել հաստատված ձևով հայտարարություն կոնկրետ օրվանից անորոշ կամ որոշակի ժամկետով գործունեությունը դադարեցնելու մասին: Նման հայտարարության ներկայացումից հետո մինչև գործունեության վերսկսման մասին հայտարարության ներկայացումը հարկ վճարողը որևէ հարկատեսակի կամ վճարի մասով ամբողջական հաշվետու ժամանակաշրջանների համար հարկային մարմին հարկային (որոշակի բացառություններով) հաշվարկներ (այդ թվում՝ «զրոյական») չի ներկայացնում:

Այսինքն, գործող օրենսդրությունը նախատեսում է մեխանիզմ, որով անհատ ձեռնարկատերը կարող է պետական մարմնին հայտնել իր գործունեության ժամանակավոր դադարեցման մասին, իսկ այդպիսի կամահայտնության, ինչպես նաև Պետական ռեգիստրում հաշվառումից հանելու վերաբերյալ գրառման բացակայության պայմաններում Վճռաբեկ դատարանի արտահայտած դիրքորոշման համաձայն գործում է

ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու կանխավարկածը և հարկ վճարողը հաշվառված լինելու ուժով կրում է այն բոլոր իրավունքներն ու պարտականությունները, որոնք տրված են օրենսդրությամբ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար:

Ուստի, կարող ենք փաստել, որ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված լինելու հանգամանքը, գործունեության ժամանակավոր դադարեցման մասին ներկայացված հայտարարության բացակայության պայմաններում, բավարար է Սահմանադրական դատարանի դատավորի կողմից անհամատեղելիության պահանջների խախտումը (ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու մասով) ապացուցված համարելու համար:

Շահերի բախման հարցը

Սահմանադրական դատարանի դատավորի համար ամրագրված անհամատեղելիության պահանջների էությունը ավելի լավ հասկանալու համար հարկավոր է ուսումնասիրել տվյալ նորմը կիրառելու մասով առկա դատական մեկնաբանությունները:

Այսպես, Դատավոր Գագիկ Խանդանյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու *04.10.2021թ. թիվ ԲԴԽ-56-Ո-Կ-19* գործով Բարձրագույն դատական խորհուրդը մեկնաբանելով Սահմանադրության 164-րդ հոդվածի 6-րդ մասի նորմը նշել է (ընդգծումը մերն է).

«Վերը նշված նորմը սահմանադրական կարգավիճակ սահմանափակող է, այն, ըստ էության, արգելող նորմ է, սակայն բուն արգելքի համալիր վերլուծությունը ցույց է տալիս, որ այն միտված է ոչ թե միայն արդարադատության շահերի բնականոն պաշտպանությանը, այլև դատավորի անկախության ապահովմանը: ***Հիշյալ արգելքի բացակայության դեպքում դատավորն իր հայեցողությամբ կարող էր օգտվել ձեռնարկատիրությամբ զբաղվելու կամ որևէ այլ պաշտոն կամ վճարովի աշխատանք ընտրելու իրավունքից, ինչը յուրաքանչյուր դեպքում անխուսափելիորեն կստեղծեր շահերի բախման իրավիճակ, ինչն անհամատեղելի է դատավորի կարգավիճակի հետ»:***

Նույն գործով ԲԴԽ-ն նշել է (ընդգծումը մերն է).

«Ինչ վերաբերվում է ուղղակիորեն ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքին, ապա տվյալ դեպքում, ինչպես արձանագրված է վերը, միջազգային իրավական չափանիշներով ***առավել մեծ նշանակություն է տրվում ոչ թե գործունեության այս կամ այն տեսակին, այլ շահերի բախման երևույթի բացառմանը****: Անկախ այն հանգամանքից, թե դատավորն աշխատանքային գործունեության ինչ տեսակով է կապված այս կամ այն առևտրային կազմակերպության կամ մարմնի հետ,* ***շահերի բախման տեսանկյունից այն առաջացնում է անաչառությունը կասկածի տակ դնող օբյեկտիվ հիմքեր»:***

Այսինքն, ԲԴԽ-ն, վերլուծելով Սահմանադրության 164-րդ հոդվածի 6-րդ մասով ամրագրված անհամատեղելիության պահանջները (այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքը), դրա նշանակությունը բացահայտել է ***ոչ թե կոնկրետ շահույթ ստանալու նպատակ հետապնդող գործողության կատարման կամ այդպիսի գործողության կատարումից ձեռնպահ մնալու, այլ՝ շահերի բախման իրավիճակի ստեղծման, դրա հետևանքով դատավորի անաչառությունը կասկածի տակ դնող օբյեկտիվ հիմքերի առաջացման մեջ՝ անհամատեղելի համարելով այդ իրավիճակը դատավորի կարգավիճակի հետ:***

Նշված գործով (անհամատեղելիության պահանջների այլ հիմքի խախտումը արձանագրելու մասին) ԲԴԽ մեկնաբանության համաձայն դատավորը ընկերության կանոնադրությունում մասնակիցների փոփոխություն և գործադիր մարմնի նշանակման գրանցում կատարելու նպատակով Պետական ռեգիստր դիմում ներկայացնելով «*ինքն իրեն դիտարկել է որպես ընկերության միակ մասնակից՝ փաստացի ներգրավված լինելով ընկերության ներկայացուցչական, կարգադրիչ և կառավարման գործառույթների իրականացմանը»:* Այսինքն, ԲԴԽ-ն անձի կողմից որոշակի վարքագիծ ցուցաբերելը որակել է որպես անձի գիտակցված ընտրություն իր գործողությամբ (կամ անգործությամբ) անհամատեղելիության պահանջներով սահմանված անթույլատրելի արարք կատարելու առումով:

Անհատ ձեռնարկատեր հանդիսացող Սահմանադրական դատարանի դատավորի համար այդպիսի գիտակցված ընտրություն կարող է դիտարկվել դատավորի պաշտոնը ստանձնելուց հետո որպես անհատ ձեռնարկատեր հաշվառումից դուրս չգալը (ինչպես պատգամավորների դեպքում՝ համաձայն «Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» օրենքի 2-րդ հոդվածի) և այդ ընթացքում իր՝ անհատ ձեռնարկատիրոջ կարգավիճակում սովորաբար իրականացվող գործունեության բացահայտված դեպքի (անկախ դրա հատուցելի կամ անհատույց լինելը) առկայությունը:

Վենետիկի հանձնաժողովը ՀՀ դատական օրենսգրքի նախագծի վերաբերյալ իր թիվ 893/ 2017 (CDL(2017)025) կարծիքի 57-րդ կետում, քննարկելով դատավորների կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու խնդիրները, առաջարկել է սահմանել ավելի խիստ կանոն, որի համաձայն դատավորը ընտրվելու պահից պետք է վաճառի իր մասնակցությունը առևտրային կազմակերպություններում, կամ առնվազն դրանք տրամադրի հավատարմագրային կառավարման և ***հրաժարվի մասնակցել ցանկացած ձեռնարկատիրական գործունեությունում, անգամ եթե դա վերաբերվում է իր բարեկամներին (relatives) և իրականացվում է անհատույց հիմունքներով (without pay):*** Այսինքն, Հանձնաժողովի մեկնաբանության համաձայն, անգամ, եթե սովորաբար ձեռնարկատիրական գործունեություն իրականացնողը կոնկրետ դեպքում իր

ծառայությունները մատուցի առանց որևէ վճար ակնկալելու, դա նույնպես պետք է մեկնաբանվի որպես ձեռնարկատիրական գործունեության իրականացում:

«Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասի իրավակարգավորումներից հետևում է, որ ի թիվս այլնի առևտրային կազմակերպության մասնակից լինելը (բացառությամբ այն դեպքի, երբ առևտրային կազմակերպության մասնակցի բաժնեմասը ամբողջությամբ հանձնվել է հավատարմագրային կառավարման) համարվում է ձեռնարկատիրական գործունեություն:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝

«5. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պաշտոնում նշանակվելուց (ընտրվելուց) հետո՝ մեկ ամսվա ընթացքում, պարտավոր են ապահովել սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների կատարումը»:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 10-րդ մասը նախատեսում է նույն հոդվածի 5-րդ մասի պահանջի (կոնկրետ դեպքով) ապահովման մեխանիզմ, որի համաձայն առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնեմաս, բաժնետոմս, փայ) ունենալու դեպքում հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են պաշտոնում նշանակվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, այն օրենքով սահմանված կարգով հանձնել հավատարմագրային կառավարման:

Նշված օրենսդրական կարգավորումներից կարելի անել հետևյալ եզրահանգումը. օրենսդրի կողմից սահմանած նորմատիվ կանոնի համաձայն՝

1. առևտրային կազմակերպության կապիտալում մասնակցություն (փայ) ունենալը ինքնին անհամատեղելիության պահանջի խախտում է (բացառությամբ, եթե այն բանկի թողարկած կանոնադրական կապիտալի 0,0001%-ը չգերազանցող բաժնեմասնակցություն է),

2. այդ կանոնը չխախտելու և բաժնեմասը պահպանելու միակ եղանակը բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելն է,

3. օրենսդիրը բոլոր դեպքերի համար նախատեսում է անհամատեղելիության պահանջների ապահովման մեկամսյա ժամկետ, որը սկսում է հոսել պաշտոնում նշանակվելուց (ընտրվելուց) պահից:

4. Առևտրային կազմակերպությունում մասնակցություն ունենալու դեպքում, անհամատեղելիության պահանջների ապահովման օրենքով նախատեսված մեխանիզմը՝ փայաբաժինը (մասնակցությունը) հավատարմագրային կառավարման հանձնելն է:

Եթե իրականացնենք համեմատական վերլուծություն, ապա կարող ենք փաստել, որ, և՝ կազմակերպությունում մասնակցություն ունենալու դեպքում, և՝ որպես անհատ ձեռնարկեր հաշվառվելու դեպքում անձի ձեռնարկատիրական գործունեության հետ կապված

իրավունքների և պարտականությունների ծավալը և բովանդակությունը համանման են, հետևաբար՝ երկու դեպքում էլ շահերի բախման, դատավորի անկախությունը վտանգելու, ձեռնարկատիրական գործունեության գործընթացների վրա որպես դատավոր ներազդելու վտանգները նույնպես նույնական են: Եթե առևտրային կազմակերպության դեպքում, անձի ազդեցությունը առևտրային կազմակերպության նկատմամբ, հետևաբար շահերի բախման վտանգը բացառելու միջոցը մասնակցությունը (փայաբաժինը) հավատարմագրային կառավարման հանձնելն է, ապա անհատ ձեռնարկատեր լինելու դեպքում՝ այդպիսի միջոցները կիրառելի չեն: Անհատ ձեռնարկատիրոջ դեպքում, ելնելով այդ իրավաբանական ինստիտուտի յուրահատկություններից (այդ թվում՝ գործունեությամբ անձամբ զբաղվելու հատկությունը), անձի կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հետ կապված վերը նշված վտանգները զսպելու օրենքով սահմանված եղանակը անհատ ձեռնարկատերին հաշվառումից հանելն է:

Անհամատեղելիության պահանջները Սահմանադրության համաձայն նույնն են, ինչպես Սահմանադրական դատարանի դատավորների, այնպես էլ Ազգային ժողովի պատգամավորների համար:

«Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝

«1. Սահմանադրության 95-րդ հոդվածին համապատասխան՝ պատգամավորը չի կարող զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:

2. Պատգամավորական մանդատն ստանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, պատգամավորը պարտավոր է՝

1) դուրս գալ անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառումից, (...):

Այսինքն, Ազգային ժողովի պատգամավորի կարգավիճակի և գործունեության հետ կապված մի շարք իրավահարաբերություններ կարգավորող օրենքով օրենսդիրը սահմանել է անհատ ձեռնարկատեր հաշվառված պատգամավորի համար ***անհամատեղելիության պահանջների խախտումից խուսափելու հստակ եղանակը, այն է՝ անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառումից դուրս գալը,*** ինչը որպես անհամատեղելիության պահանջներին բավարարելու պարտադիր կատարման ենթակա վարքագիծ արձանագրված է նաև ԳՐԵԿՈ-ի (2016թ. փետրվարի 25-ին հրապարակված) չորրորդ փուլի գնահատման հաշվետվության 58-րդ կետում:

Հաշվի առնելով, որ պատգամավորի և Սահմանադրական դատարանի դատավորի համար սահմանված անհամատեղելիության պահանջները նույնն են, ողջամտորեն կարելի

է ենթադրել, որ նույնն են նաև դրանց պահանջներին անձի վարքագիծը համապատասխանեցնելու պարտադիր կատարման ենթակա քայլերը:

Հետևաբար, այն դեպքերում, երբ անձը դատավոր նշանակվելուց հետո ունեցել է ողջամիտ ժամկետ (առնվազն մեկ ամիս) իր ձեռնարկատիրական գործունեությունը դադարեցնելու (փվյալ դեպքում՝ հաշվառումից դուրս գալու) համար, բայց չի կատարել կամ կատարել է ժամկետի վերազանցմամբ, ապա փվյալ անձը խախտել է Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված անհամատեղելիության պահանջները:

Խախտման հետևանքները

Սահմանադրության 164-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝

«9. Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները՝ Սահմանադրական դատարանի որոշմամբ, իսկ դատավորի լիազորությունները՝ Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ, դադարեցվում են անհամատեղելիության պահանջները խախտելու, քաղաքական գործունեությամբ զբաղվելու, առողջական վիճակի պատճառով պաշտոնավարման անհնարինության, էական կարգապահական խախտում կատարելու դեպքերում»:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝

«2. Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները սույն օրենքի 83-րդ հոդվածով սահմանված կարգով դադարեցվում են, եթե նա՝

1) խախտել է Սահմանադրությամբ և սույն օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները. (...)»

«Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝

«17. Հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի կողմից սույն հոդվածով նախատեսված անհամատեղելիության պահանջները խախտելը նրա լիազորությունների դադարեցման կամ նրան զբաղեցրած պաշտոնից ազատելու հիմք է»:

Վերը նշված նորմերի բովանդակությունից ակնհայտ է, որ Սահմանադրական դատարանի դատավորի կողմից անհամատեղելիության պահանջների խախտումը ունի մեկ հետևանք, այն է՝ դատավորի լիազորությունները դադարում են օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարանի որոշմամբ:

Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունների դադարեցումը անհամատեղելիության պահանջների խախտման հիմքով հիմնականում կարգավորված է «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 83-րդ և «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 109-րդ հոդվածներով: Նշված նորմերի համաձայն գործընթացը մեկնարկում է Ազգային ժողովի խմբակցություններից որևէ մեկի կողմից Ազգային ժողովում Սահմանադրական դատարան դիմելու մասին Ազգային ժողովի

որոշման նախագիծ շրջանառության մեջ դնելու միջոցով: «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով սահմանված գործընթացների արդյունքում, եթե հաստատվում է Սահմանադրական դատարանի դատավորի կողմից անհամատեղելիության պահանջների խախտում կատարելու կասկածը հիմնավորվում է, ապա Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով ընդունված որոշմամբ Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները դադարեցնելու հարցով դիմում է ներկայացնում Սահմանադրական դատարան:

2. Կանոնի կիրառումը փաստերի նկատմամբ

Սեդա Սաֆարյանը 2022թ. սեպտեմբերի 15-ին Ազգային ժողովի որոշմամբ ընտրվել է Սահմանադրական դատարանի դատավոր: Այդ պաշտոնը Սեդա Սաֆարյանը պետք է ստանձներ ոչ թե անմիջապես, այլ՝ 2022 թվականի դեկտեմբերին, քանի որ գործող դատավորներից երկուսի պաշտոնավարման ժամկետը լրանում էր դեկտեմբերի 10-ին:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը Սահմանադրական դատարանի նորընտիր դատավորի կողմից պաշտոնի ստանձնման երկու ժամկետ է նախատեսում՝

Ազգային ժողովում երդում տալուց հետո՝ անհապաղ, իսկ, եթե նա գալիս է փոխարինելու մեկ այլ դատավորի (պաշտոնավարման ժամկետի ավարտի հետ կապված), ապա այդ (փոխարինվող) դատավորի պաշտոնավարման ժամկետի ավարտի օրը:

ՍԴ դատավոր երկու դատավորների պաշտոնավարման ժամկետը ավարտվում էր 2022թ. դեկտեմբերի 10-ին, իսկ Սեդա Սաֆարյանը ՍԴ դատավորի պաշտոնը ստանձնելու երդումը Ազգային ժողովում տվել է դեկտեմբերի 16-ին:

Հետևաբար, Սեդա Սաֆարյանը լիարժեքորեն ստանձնել է Սահմանադրական դատարանի դատավորի պաշտոնը, լիազորություններն ու կարգավիճակը ամենաուշը դեկտեմբերի 16-ից սկսած:

Սեդա Սաֆարյանը ընդհանուր առմամբ իր փաստաբանական գործունեությունը իրականացրել է հատուցելի հիմունքներով՝ զբաղվելով ձեռնարկատիրական գործունեությամբ: Այն, որ Սեդա Սաֆարյանը փաստաբանական գործունեությունը սովորաբար իրականացրել է հատուցելի հիմունքներով ապացուցվում է www.datalex.am համակարգում առկա դատական ակտերում տեղ գտած տեղեկատվության համաձայն (մի քանի օրինակներ. *ԵԴ/52683/02/21 - «Ընդ որում, հայցվորի ներկայացուցիչը խնդրել է որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար, պատասխանող հօգուտ հայցվորի բռնագանձել 150000 (հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:)*, *ՎԴ/6806/05/20 «Սույն գործի փաստերի համաձայն՝ Ռոբերտ Վաղարշակի Մուրադյանի /Պատվիրատու/ և փաստաբաններ Սեդա Սերյոժայի Սաֆարյանի ու Արմեն Սերյոժայի Դավթյանի միջև 02.10.2020թ. կնքվել է «Ծառայությունների մատուցման» պայմանագիր, որով*

փաստաբանները պարտավորվել են ՀՀ վարչական դատարանում մասնակցել թիվ ՎԴ/6806/05/20 վարչական գործով դատաքննությանը, ներկայացնել հայցադիմումի պատասխան և հանձնարարությանը վերաբերվող դիրքորոշումներ՝ պայմանագրի գինը սահմանելով 350.000 ՀՀ դրամ», ԵԴ/36138/02/20 - «Հայցվորի ներկայացուցիչը խնդրել է Պատասխանողից հօգուտ Հայցվորի բռնագանձել նաև դատական ծախսերը՝ փաստաբանի վարձատրությունը 250000 ՀՀ դրամի չափով և նախապես վճարված պետական տուրքի գումարը», ԵԴ/33820/02/20 - «Մարինե Նիկողայոսի Գրիգորյանի և փաստաբան Սեդա Սաֆարյանի միջև 25.01.2020թ.-ին կնքված ծառայությունների մատուցման պայմանագրի համաձայն[a] հոնորարի չափը փոխադարձ համաձայնությամբ կազմում է 200.000 ՀՀ դրամ»:

Սեդա Սաֆարյանը իր ձեռնարկատիրական գործունեությունը իրականացրել է 11.08.1994թ. ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում 282.00216 հաշվառման համարի տակ գրանցված ՍԵԴԱ ՍԱՖԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ անհատ ձեռնարկատիրոջ միջոցով:

ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրից 06.02.2023թ.-ին բեռնված էլեկտրոնային քաղվածքի համաձայն Սեդա Սաֆարյանի կողմից իր անունով գրանցված անհատ ձեռնարկատիրոջ հետ կապված իրականացվել է երկու գրառում պետական միասնական գրանցամատյանում կատարված փոփոխությունների վերաբերյալ.

1. 12.07.1995թ. կատարվել է ԱՁ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հասցեի փոփոխություն,

2. 27.01.2023թ. անհատ ձեռնարկատերը հանվել է հաշվառումից (տե՛ս կից քաղվածքը):

Ակնհայտ է, որ պետական ռեգիստրի գրանցամատյանում առկա տեղեկատվության համաձայն Սեդա Սաֆարյանը առանց ընդհատումների եղել է անհատ ձեռնարկատեր 1994թ. օգոստոսի 11-ից մինչև 2023թ. հունվարի 27-ը: Հաշվի առնելով, որ անհատ ձեռնարկատիրոջը հաշվառումից հանելու իրավահարաբերությունը կարգավորող օրենքի համաձայն որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված անձը համարվում է պետական հաշվառումից հանված դրա մասին դիմումը ներկայացնելու պահից, ապա կարող ենք պնդել նաև, որ Սեդա Սաֆարյանը իր դիմումը ներկայացրել է հենց 2023թ. հունվարի 27-ին: Առկա չէ նաև որևէ տեղեկատվություն Սեդա Սաֆարյանի կողմից Հարկային օրենսգրքի 53-րդ հոդվածի 8-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն ՀՀ ՊԵԿ իր գործունեությունը դադարեցնելու վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու մասին:

«Հանրային ծառայության մասին» օրենքը հանրային պաշտոն զբաղեցնող անձանց (այդ թվում՝ ՍԴ դատավորներին) իրենց վարքագիծը Սահմանադրությամբ սահմանված անհամատեղելիության պահանջներին համապատասխանեցնելու նպատակով տալիս է

մեկամսյա ժամկետ, որը սկսում է հոսել ***պաշտոնում նշանակվելուց (ընտրվելուց) հետո:*** Հասկանալի է, որ այս դրույթը նպատակ ունի հանրային պաշտոն զբաղեցնող անձանց տալու ողջամիտ ժամկետ, որի ընթացքում օբյեկտիվորեն հնարավոր կլինի կատարել բոլոր տեխնիկական քայլերը ձեռնարկատիրական գործունեությունը դադարեցնելու համար: Տվյալ դեպքում Սեդա Սաֆարյանը, Ազգային ժողովի որոշման համաձայն նշանակվելով սեպտեմբերի 15-ին, փաստացի ունեցել է շուրջ երեք ամիս ձեռնարկատիրական գործունեությունը դադարեցնելու համար, ինչը անհատ ձեռնարկատիրոջ դեպքում կայանում է ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստր մեկ պատշաճ դիմում ներկայացնելու և իհարկե փաստացի գործունեություն իրականացնելուց ձեռնպահ մնալու մեջ: Սեդա Սաֆարյանի կողմից նշված պահանջները չեն կատարվել (դիմումը չի ներկայացվել ժամկետում, իսկ գործունեությունը շարունակվել է): Անգամ, եթե մեկամսյա ժամկետը մեր կարծիքով օրենքի ոչ ողջամիտ մեկնաբանության (քանի որ օրենքը սահմանել է հաշվարկը *«պաշտոնում նշանակվելուց (ընտրվելուց) հետո»* մեկնարկելու իմպերատիվ պահանջը) արդյունքում սկսի հոսել ոչ թե դատավորի նշանակվելուց, այլ երդում տալու օրվանից (դեկտեմբերի 16-ից) սկսած, ապա միևնույնն է Սեդա Սաֆարյանի կողմից հունվարի 17-ին անհատ ձեռնարկատիրոջը հաշվառումից հանելը կհամարվի խախտում՝ դրանց համար սահմանված ժամկետի վերազանցման պատճառով:

Ուստի, Սեդա Սաֆարյանը 2022թ. դեկտեմբերի 16-ից (ՍԴ դատավորի պաշտոնի ստանձնման օր) մինչև 2023թ. հունվարի 16-ը (անհատ ձեռնարկատեր հանդիսանալու վերջին օրը), ընդհանուր առմամբ 32 օր շարունակ եղել է անհատ ձեռնարկատեր՝ խախտելով Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված անհամատեղելիության պահանջները (ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու մասով):

Նշվածը ինքնին բավարար է, Սեդա Սաֆարյանի կողմից անհամատեղելիության պահանջների խախտումը արձանագրելու համար, քանի որ օրենքով Սահմանադրական դատարանի դատավորի համար արգելված է հենց ***«անհատ ձեռնարկատեր լինելը»***, անկախ նրանից, թե տվյալ ԱՁ-ն իրականացնում է գործունեություն, թե ոչ: Բացի այդ, ինչպես վերը նշված է, անհամատեղելիության պահանջներին դատավորի վարքագիծը համապատասխանեցնելու հստակ գործողությունը պետք է լիներ ամենաուշը դեկտեմբերի 16-ին անհատ ձեռնարկատիրոջը հաշվառումից հանելը, ինչը Սեդա Սաֆարյանը արել է հունվարի 27-ին՝ փաստացի խախտելով օրենքը 32 օր շարունակ:

Որպես հավելյալ տեղեկատվություն կարևոր է արձանագրել նաև, որ Սեդա Սաֆարյան Սերյոժայի անհատ ձեռնարկատերը դե-ֆակտո ակտիվ (գործող) է եղել, քանի որ Սեդա Սաֆարյանը datalex.am կայքի տվյալների համաձայն մշտապես զբաղվել է փաստաբանական գործունեությամբ (մի քանի օրինակ նշված է վերևում): Սեդա

Սաֆարյանի կողմից փաստաբանական գործունեությամբ է զբաղվել նույնիսկ դեկտեմբերի 16-ից (ՍԴ դատավորի պաշտոնի ստանձնման օրը) հետո դեկտեմբերի 28-ին՝ վերաքննիչ դատարան ներկայացնելով դեկտեմբերի 22-ին իրեն վերադարձված բողոքը՝ ակնհայտորեն ստեղծելով շահերի բախման իրավիճակ:

Շահերի բախման արձանագրման և Սեդա Սաֆարյան Սերյոժայի անհատ ձեռնարկատիրոջ միջոցով գործունեություն ծավալելու տեսանկյունից կոնկրետ գործով փաստաբանական աշխատանքը հատուցելի կամ անհատույց հիմունքներով իրականացնելը իրավաբանական որակման տեսանկյունից էական հանգամանքներ չեն. առաջին հերթին, քանի որ Սեդա Սաֆարյանի կողմից որպես անհատ ձեռնարկատեր պետական հաշվառում ունենալը (ժամանակին հաշվառումից դուրս չգալը) ինքնին ձեռնարկատիրական գործունեություն է հանդիսանում, երկրորդ, սովորաբար իրականացվող ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում կոնկրետ դեպքով անհատույց հիմունքներով ներկայացուցչություն իրականացնելու արդյունքում գործունեությունը ինքնին չի դադարում հանդիսանալ ձեռնարկատիրական: Նշվածը հիմնավորվում է նաև վերևում ԲԴԽ-ի, Վենետիկի հանձնաժողովի (շահերի բախման, անհատույց իրավաբանական գործունեություն ծավալելու և այլնի մասին) ներկայացված դիրքորոշումներով, ինչպես նաև «Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» օրենքի 2-րդ հոդվածի դրույթներով, որոնց համաձայն անհատ ձեռնարկատեր հանդիսացող անձը Ազգային ժողովի պատգամավորի մանդատը ստանձնելուց հետո կարող է ապահովել անհամատեղելիության պահանջներին իր վարքագծի համապատասխանությունը բացառապես 1 ամսվա ընթացքում անհատ ձեռնարկատիրոջը հաշվառումից հանելու միջոցով:

Դեկտեմբերի 28-ին ներկայացուցչություն իրականացնելու փաստի մասին Սեդա Սաֆարյանը նշել է 2022թ. հունվարի 10-ին տեղի ունեցած Սահմանադրական դատարանի աշխատակարգային նիստի ժամանակ, *տե՛ս https://bit.ly/3EklTnC*): Նշված բողոքը Սեդա Սաֆարյանը առաջին անգամ ներկայացրել է դատարան դեկտեմբերի 5-ին, որից առաջ՝ նոյեմբերի 30-ին դիմել էր Փաստաբանների պալատ իր փաստաբանական արտոնագիրը կասեցնելու նպատակով:

Սեդա Սաֆարյանի կողմից նոյեմբերի 30-ին Փաստաբանների պալատ արտոնագիրը կասեցնելու նպատակով դիմելը (Սաֆարյանի արտոնագիրը կասեցվել է հենց նոյեմբերի 30-ից, տե՛ս Փաստաբանների պալատի պատասխանը մեր հարցմանը), ինչպես նաև Սահմանադրական դատարանի դատավորների առաջ եղելությունը թեկուզև մասնակի ներկայացնելը վկայում են նրա մասին, որ վերջինս լիովին ընկալել է ՍԴ դատավորի և անհատ ձեռնարկատեր փաստաբանի գործունեությունների անհամատեղելիությունը:

Այնուամենայնիվ, ՄԻԵԴ նախադեպային որոշման համաձայն մասնագիտական գործունեություն ծավալող անձինք իրենց մասնագիտական գործունեության ընթացքում սովոր են զգուշավորության բարձր մակարդակ դրսևորել, ինչը հաշվի առնելով՝ կարելի է ակնկալել, որ նշված անձինք հատուկ ուշադրություն կդարձնեն այդպիսի գործունեության արդյունքում առաջացող հնարավոր ռիսկերը գնահատելուն («Դելֆի ՍՊԸ-ն ընդդեմ Էստոնիայի» գործով 16.06.2015թ. վճիռը, գանգատ թիվ 64569/09, § 122): Մեկ այլ որոշմամբ ՄԻԵԴ-ը նշել է, որ ըստ էության մասնագիտական ոլորտում զգալի փորձ ունեցող անձինք պարտավոր են իմանալ իրենց նկատմամբ առկա օրենսդրական սահմանափակումների մասին «Գործի փաստական հիմք հանդիսացող իրադարձությունների պահին քննության առարկա իրավադրույթն ուժի մեջ էր մի քանի տարի, եւ դիմումատուն, որը պրոֆեսիոնալ դատավոր էր եւ ոլորտում զգալի փորձ ուներ, չէր կարող պնդել, որ տեղյակ չէ դրա բովանդակության մասին» (Panioglu v. Romania, գանգատ թիվ 33794/14, 08.12.2020թ., § 106): Ուստի՝ սույն առերևույթ խախտումը քննելու տեսանկյունից, անձի դիտավորությունը կամ ընկալումները իրավաբանական որակման տեսանկյունից արժեք չեն ներկայացնում:

Փաստաբաններ

ՍՈՍ ՀԱԿՈԲՅԱՆ _____

ԱՐՍԵՆ ԲԱԲԱՅԱՆ _____